Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԼՅԻ պայմանագրի

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6. Լոռի – ցերեկային կենտրոն (Վանաձոր, Ալավերդի) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025 -30.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 19.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 43 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է թվով 2 դեպքի վարում՝ վերափաստագրման կազմակերպման նպատակով, 20 ուղղորդում. միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Արդյունավետ խոսելու տեխնիկան», «Ճգնաժամային իրավիճակներ, դրանց հաղթահարման հնարավորությունները»:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝
    - Ձեռագործություն և ջուլհագործություն.
    - Առողջապահական,
    - Գրական,
    - Նկարչական:

  Վերոնշյալ խմբակներին մասնակցել է թվով 25 շահառու:
  Կազմակերպվել է թվով 6 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է թվով 43 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ շահառուների ծննդյան օրերի նշում (երեք անգամ), էքսկուրսիա դեպի Ախթալա եվ Հաղպատ, այցելություն Վանաձորի Երկրաբանական եվ Կերպարվեստի թանգարաններ, գրական հանդիպում Լոռու մարզային գրադարանի աշխատակցի հետ, Տարեցների միջազգային օր, Ամանորին նվիրված միջոցառում:
- Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 4 հանդիպում՝ ուղղված խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, որին մասնակցել է թվով 20 շահառու:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են կենտրոնի առօրյան ներկայացնող հետևյալ նյութերը՝

- Գրական հանդիպում Լոռու մարզային գրադարանի աշխատակցի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/ypwdep, https://surl.li/cwkjgl),
- Շահառուների ոսկե հարսանիքը ցերեկային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/ohajdc),
- Էքսկուրսիա դեպի Վանաձորի Երկրաբանական թանգարան, պատկերասրահ, Կերպարվեստի թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/ppswx, https://surl.li/oahjln),
- Տարեցների միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/uacdwv, https://surl.li/uesdch):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնի սոցիալական աշխատողը մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում տեղի ունեցած աջակցող ցանցի տարածաշրջանային ֆորումին, որի հիմնական նպատակն է տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության ակտիվացումը, սոցիալական դեպքի վարման շրջանակներում ռեսուրսների ներգրավման և օգտագործման, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության բարձրացումը:
- Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են PUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Նորարարական մոտեցումները տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում. ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:

- Կենտրոնի համակարգողն ու սոցիալական աշխատողը մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ Վանաձոր խոշորացված համայնքում իրականացված սեմինար-դասընթացին՝ «Փաստաթուղթ չունեցող, քաղաքացիություն չունեցող և քաղաքացիություն չունենալու ռիսկի տակ գտնվող անձանց նույնականացումը և ուղղորդումը» թեմայով:

Ձևաչափ

ԵՐԿԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 42/43 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 23 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 11 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 11 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 31 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի  պարագայում) | 20 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի  պարագայում) | 20 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 25 |
| 5.1 | առողջապահական | 12 |
| 5.2 | գրական | 14 |
| 5.3 | ձեռագործության և ջուլհագործության | 6 |
| 5.4 | նկարչական | 6 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի  պարագայում) | 43 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 38 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | - |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ «19» 12. 2025թ
[illegible]